

Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԻՐԱԻՈՒՆՔԻ ԲՆԱԳԱԻԱՌԷՆ

Ա.

Հայ ընտանեկան կազմակերպութիւնը, որի մէջ նաեւ ամուսնական իրաւունքը՝ ըմբռնման նշաններ ունին, որոնք իրենց հիմնական գծերով միւս հին արիական ազգերի իրաւունքի նոյն ըմբռնումներին զարմանալիօրէն նման են: Ակնցախ այդ նմանութիւնները միայն այդ իրաւունքների ցեղակցութեան հանգամանքով են բացատրելի. բայց խիստ ուշագրաւ են նամանաւանդ ցեղական բնոյթագծերը. —

ա) Ամուսնալուծութեան դէպքում մարդու կողմից իր անպարտ կնոջը տուգանք վճարելու հայկական իրաւակարգը խիստ տարբեր է յունական Gortynի օրէնքի տրամադրութիւնից, ինչպէս եւ հռոմէական եւ ֆրանկո-արեւմտեան իրաւունքի կանոններից:

բ) Հայկական բաժինքի (dos, dot) եւ ամուսնալուծական տուգանքի, (donatio propter nuptias) հիմունքները յատուկ են միայն Հայոց իրաւունքին և ազգային գունաւորումն ու կնիք ունին.

գ) Առանձնապէս մեծ նշանակութիւն ունին հայկական ժառանգական իրաւունքի հիմունքները, որ նրան այնքան ցեղակից են դարձնում հին արիական իրաւունքին: Խօսքն, ի մասնաւորի, վերաբերում է աղջիկների ժառանգելու իրաւունք ունենալուն, որ օտար ազդեցութիւնից շատ հեռու է, ու հին, ցեղային, եւ ոչ, ինչպէս սխալմամբ կարծւում է՝ նորամուտ:

Երբ այս ասածներն, ըստ երեւոյթին հակասութեան մէջ են ընկնում Յուստինիանոսի

XXI-րդ նովելլի հետ, որ յատկապէս արեւմտեան Հայաստանի համար է սահմանուած, եւ ուր ասուած է, թէ Հայոց մօտ աղջկերք եւս անշարժ կայք ժառանգելու իրաւունք պիտի ունենան: Պատմական փաստերը ցոյց են տալիս, որ կենդրոնական Հայաստանում Հայ աղջկերք իրենց հօր կարողութիւնից մասն, նոյն իսկ անշարժ գոյք, ստանալու իրաւունք ունեցել են Յուստինիանի օրինադրութիւնից շատ առաջ: Ինչպէս ասացինք, Յուստինիանի 24րդ նովելլան ի նկատ ունէր Փոքր Հայքը: Հաւանօրէն, արեւմտեան Հայքը, հեռու բուն հայրենիքէն, ապրելով սերտ հարեւանութեան մէջ առաւելապէս սեմիտ ցեղերի հետ, ինչպէս այդ ցոյց է տալիս Ասորական դատաստանադիրքը, ընտանեկան-ժառանգական սովորութիւնների խնդիրներում հեռացել էին ցեղական իրաւունքի տրամադրութիւններից, ու փոխառութիւններ արել հարաւային փոքրասիական օրէնքներից: Այս հանգամանքով է միայն բացատրելի՝ Յուստինիանի օրէնսդրական այդ ձեռնարկը՝ ճիշդ դարու չորրորդ տասնամեակում:

Լեհահայոց դատաստանագրքի հետեւեալ կտորը. «Equalis divisio debet cedere et venire tam ad filios quam ad filias aequali sorte et successionem» (c. 116), Ուսուցչապետ Karst հաշւում է «վերջին ժամանակների նորութիւն» (Rechtsbuch, II. 169 երես), մինչդեռ այդ հատւածի մէջ հայ հին իրաւունքի ինստիտուտներէն մէկն է առաջ բերւած անժխտելիօրէն.

դ) Հայկական բաժինքն իրապէս այն մասն է, որ աղջիկն ստանում է հայրական տանէն՝ ամուսնանալու դէպքում:

ե) Գօշի եւ Սմբատ իշխանի դատաստանագրքերը բոլոր այն խնդիրներում, որ հայ հին իրաւունքի հետ ազերս ունին, պէտք է խիստ զգուշութեամբ օգտագործին, որովհետեւ նոցա մէջ օտարն ու ազգայինը խառնաշփոթած են, եւ կարող են մոլորութեան մէջ ձգել քիչ տեղեակ հարցաւորին:

զ) Ուսուցչապետ Karstը Կիլիկեան (Սըմբատի) դատաստանագրքին մէջ հանդիպում է մէկ իրաւանորմի, որ կոչւում է «անփեսայութիւն»: Անձանօթ հայ իրաւունքին, նա զըտնում է, որ ֆրանկո-լատինական իրաւունքից արւած մէկ փոխառութիւն է դա (Recht. II. երես 475). իր խօսքերով ասած «ինչ որ դարմանալի պիտի լիւի, դա այն է, որ դրա մէջ (անփեսայութեան) հայկական իրաւունքին օտար մէկ գիծ կայ, որը ոչ դատաստանագրքի (Գօշի) եւ ոչ էլ յունա-բիւզանդական իրաւունքին է յատուկ»: Թեւ թէ, ուսուցչապետ Karstին քիչ ծանօթ է եղել հինարիական putrika putra ինստիտուտը, որ նշանակում է, արու գաւակ չունենալու զէպքում զստեր միջոցով իրեն ժառանգ յարուցանել տալ, որ Հայերի մէջ կոչւում է տնփեսայութիւն, այսինքն իր աղջկայ ամուսնուն (իր փեսային, ասել է) վերցնել իր տունը, որը մանկով իր աներով տունը եւ մնալով նրա ընտանիքի մէջ՝ ժառանգներ է յարուցանում իր աներով՝ նրա օճախը շարունակելու համար, կամ ինչպէս ռամկօրէն ասուում է՝ «օճախը վառ պահելու համար»: Ասածներէցս պարզ է. որ Կիլիկեան դատաստանագրքի հեղինակ հայ իշխանը, ծանօթ ցեղական իրաւունքի կանոններին, իր դատաստանագրքի մէջ տեղ է տւել ժառանգական իրաւունքի հայրենի ըմբռնողութեանը:

է) Մխիթար Գօշն իր դատաստանագրքի 124րդ յօդւածի մէջ մահմետականների սովորութիւնների մասին խօսելիս, ասում է «որ նոքա ամենից առաջ, ամուսնացող կնոջ գինն են որոշում, որին նոքա մահր են անւում, եւ որը Հռոմայեցիների մօտ դուար է կոչւում. յետոյ նոքա որոշում են նաեւ աղջկայ մասը հայրական կարողութեան մէջ, որին պոռոյգ են կոչում»... Իբր բացատրութիւն՝ նա աւելացնում է «Մեզ մօտ չէ այսպէս, մարդը ոչ մի գնման վճար իր կնոջ անձի համար չի տալիս, միայն սակաւ իրեր, երեսաց-տես տնուն է կրում, եւ մանում է նրա իշխանու-

թեան տակ»: Այստեղ խօսքը վերաբերում է *danatio propter nuptias*ին: Գօշի յայտնի է եղել որ «մեզանում» (Հայերիս մօտ) դրսեւկատմամբ այլ կարգեր են եղել եւ որ այդ կարգերը մահմետականների եւ Հռոմայեցիների սովորութիւններին չեն համապատասխանել: Դատաստանագրքը կազմողը գիտէ եղեր, որ մեզանում *danatio propter nuptias*ը նշանադրութեան խօսք տալ առնելիս չեն կտրում վերջացում: Բայց որովհետեւ նա զանազան խնդիրներ իրար է խառնում, ու *donatio*ի էութիւնն ու նշանակութիւնը պարզօրէն չհասկնալով, զայն շփոթում է զլիսագին կոչւած վճարքի հետ: Սակայն Մխիթար Գօշի համար մէկ բան պարզ է եղել — որ Հայ աղջկերք ամուսնանալիս հանները բաժինք էին տանում:

Հայոց ամուսնական սովորութիւնները որքան եւ մերժէին (քաղաքներում) գնման ուղղակի ձեւը, այնու ամենայնիւ նոցա մէջ մնացել են տուր եւ առի պարզ հետքեր: Այդ հետքերն այն ընձաներն են, որ փեսացուի կողմից հարսնացուին են տրւում թէ՛ ամուսնութեան դաշնը — նշանադրութեանը ժամանակ — կնքելիս, եւ թէ՛ յետոյ Դատաստանագրքի մէջ ահա, խօսքը վերաբերում է ամուսնութեան դաշնը կապելու այդ իրաւակարգին:

Դատաստանագրքի 124րդ յօդւածին կից Գօշի տւած մեկնութիւնը ցեղային իրաւունքի հետեւեալ երեք հիմունքներն է ճանաչել տալիս. — 1. Հայ իրաւունքին յատուկ չէ նշանադրութեան ժամանակ *donatio propter nuptias*ը սահմանել, որ ըստ հռոմէական իրաւունքի ամուսնալուծութեան զէպքում անպարտ կնոջը վճարելիք տուգանքի բանաձեւում է՝ ընդհանուր առմամբ, եւ որը սահմանւում էր նշանադրութեան դաշնը կնքելիս: Այդ բանը, պէտք է կտրուկ կերպով ասեմ, հայ իրաւունքին մնացել է բոլոր ժամանակների համար անձանօթ: 2. Փեսան իր հարսնացուին գնման միջոցով է ձեռք բերում: 3. Հայ աղջկերք ամուսնանալիս ստանում են բաժինք իրենց հայրական տանից. դա նրանց իրաւունքն էր: Հին արիական ազգերի իրաւունքին տեղեակ մէկը կը տեսնի, որ այս խնդրում հայ իրաւունքն իր հիմնական գծերով արիական է:

ը) Հայկական օժիտը, միանգամայն սխալ է կարծել, որ հռոմէական *donatio propter*

nuptiasն է: Ըստ հռոմէական իրաւունքի, ամուսնութեան դաշնի ժամանակ անհրաժեշտօրէն սահմանուած է այդ donation — պարգեւը, իսկ ըստ հայ ցեղային իրաւունքի՝ պարգեւը կամ օժիտը չի սահմանուած, նա ամուսնութեան դաշնի ենթադրութիւններէց չէ, այսինքն նշանադրութեան պայմանագրի մէջ չի մտնում: Հայ իրաւունքին յատկանիշ մի զիծ է նաեւ, որ ամուսնիւնքի մէջ եղած կամ փոխադարձաբար տուած ընծաները հաշիւ մէջ չեն, դրա համար եւ չի կարող ամուսնին իր կնոջը թէ՛ նշանադրութեան ժամանակ եւ թէ՛ լետոյ, նոյն իսկ պակէն ետքը տուած ընծաներն ամուսնալուծութեան պարագայում՝ ետ պահանջել: Նոյնն է մահան դէպքում: Այս կարգին ի զօրութեան երկու կողմերի համար հաւասարապէս:

Այս իրողութիւնը յայտնի է եղել դատաստանագրքի կազմողին, որ մենք տեսնում ենք 121րդ յօդուածի վերջնութեւ հատուածի մէջ, ուր կայ թէ՛ «օժիտ զոր արարեալ իցէ, մի յիշեցէ»:

Տեղին է յաւելուել, որ իսլամական իրաւունքը հայկ. ամուսնական իրաւունքի վրայ յիշատակելու արժանի մի ազդեցութիւն չի ունեցել: Այդ առթիւ Karst ուսուցչապետը (Rechtsbuch, I. հատ. 26 երես) ասում է, թէ Հայերի մօտ նշանադրութեան դաշնը գրաւոր անելու սովորութիւնը իսլամական իրաւունքէն են վերուցած: Ի հարկէ սխալ է այս վարկածը, քանի որ բոլոր ժամանակների համար այդպիսի մի սովորութիւն մնացել է Հայոց իրաւունքին միանգամայն անծանօթ: Յարգելի ուսուցչապետը մոլորութեան մէջ է ընկած՝ բուն նիւթին անծանօթ լինելու պատճառով. նա պէտք էր լիովին հաւատ ընծայէր Գօշի այն խօսքերին թէ «առ մեզ չէ այսպէս» (121 յօդ.), քանի որ նրան (Գօշին) անսխալօրէն յայտնի էր բուն ցեղային սովորութիւնը: Գօշի այդ խօսքերը ցոյց են տալիս, թէ նա նիւթի ընտրութեան մէջ շատ էլ հողածու չէ եղած, բայց որովհետեւ իսլամական այդ սովորութիւնը խիստ հակասութեան մէջ է եղած՝ նոյն նիւթի մասին հայրենի օրէնքներին եւ սովորութեանցը, ուստի եւ իր դատաստանագրքը կարգացողին, կամ ի դէպ, դորձադրողին մոլորութեան մէջ չծղելու համար, մատնանշում է բուն ազգային կանոնը ու սովորոյթը:

Բ.

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԻՐԱՆՈՒՆԻՔԻ ԱՂԲԻԻՐՆԵՐԸ

- ա) Հայոց կանոնգիրք.
- բ) Դատաստանագրքի Սլակայ որդի Դաւթի.
- գ) Դատաստանագրքի Մխիթար Գօշի.
- դ) Դատաստանագրքի Կիլիկեան, կամ Սմբատ Իշխանի.
- ե) Հայ Պատմագրեր. Աղաթանգեղոս, Փաւստոս Բիւզանդ, Խորենացի, Սեբէոս, ևլն.
- զ) Հայ սովորոյթի իրաւունքը.
- է) Հնագիտութիւն.
- ը) Օտար դատաստանագրքեր:

1. Հայոց կանոնգիրք. — Հայ անկախ պետութեան անկումից յետոյ, նրա աեղը որոշ չափով բռնում է ազգային եկեղեցին՝ լանձին Հայրապետութեան, ասել է Հոգեւորական կազմակերպութեան: Հայաստանի օտար նուաճողները հայ ժողովրդին նկատել են միշտ իբր կրօնական մի համայնք. ու այդ կրօնի ներկայացուցիչներն, յատկապէս եկեղեցու բարձր հոգեւորականութիւնն, ընդունել են իբր ներկայացուցիչներ հայ ժողովրդի: Բաց ի գուտ կրօնական-եկեղեցական խնդիրներից, Հայաստանի այդ նուաճողներն հոգեւոր իշխանութեան իրաւարարութեանն ու կարգադրութեանն են թողել նաեւ ամուսնական ամէն կարգի, ինչպէս նաեւ ժողովրդական եւ այլ խնդիրների լուծումն ու առհասարակ դատաւարութիւնը:

Հին Հայոց մօտ ամուսնական խնդիրներն ամբողջովին եկեղեցական վարչութեան իրաւասութեանը չէին ենթարկուած, այլ եկեղեցու եւ աշխարհիկ իշխանութեան՝ միաժամանակ, ինչպէս եւ այդ առթիւ՝ պատժական կարգը:

Թէ՛ յառաջ եւ թէ՛ ազգային իշխանութեան վերանալուց յետոյ մեր եկեղեցու վարչութիւնն ունեցել է ամուսնական, վարչական ու պատժական խնդիրներ կարգադրելու համար մէկ դատաստանագրքի, որի մէջ եկեղեցու ու հօտի բարեոք կառավարելու վերաբերեալ կանոններն ու սահմանումներն ի մի էին հաւաքւած: Այդ դատաստանագրքը կոչւում է կանոնգիրք, որ առաւ իմ հրատարակութեամբ «Հայոց կանոնգիրք» անունը, մէկ շատ

հետաքրքրական ժողովածու է, որի մէջ ամփոփւած են մինչեւ Տրդ դարը տեղի ունեցած Հայոց ազգային ժողովների կանոնները, ինչպէս եւ բազմաթիւ հայ եւ օտար եկեղեցական հայրերի, Առաքելական մի քանի խումբ, Տիեզերական երեք ժողովների (Նիկիոյ, Եփեսոսի, Կոստանդնուպոլսի) եւ վեց տեղական կոչւած ժողովների կանոնները, որոնք դրամարեւել են զանազան ժամանակներում՝ մինչեւ տիեզերական առաջին ժողովը։ Ութերորդ դարը, ստուգապէս վերցրած 763 թ. պէտք է հաշուել այն վերջնական կէտը, որից յետոյ Հայոց կանոնագրքի մէջ ներմուծումներ չեն եղած։ Մի շարք գրչագրեր, իբր բացառութիւն, տալիս են, օր.՝ Յակովբ վարդապետ Ղրիմեցու (15րդ դար) կանոնական մէկ մեկնութիւնը՝ ամուսնութեան թոյլատրելի աստիճանների մասին։

Հայոց կանոնագրքի բազմաթիւ օրինակներ կան, որոնք, սակայն, հաւասար բովանդակութիւն չունին. ամենալրիւներն ունին 50 գլուխ եւ շուրջ 1500 յօդուած։

Թէ՛ ո՞վ է սկիզբը դրել կանոնագրքի կազմելու, հնար չէ ասել՝ ցարդ յայտնի տեւալներով, Հաւանօրէն կամ հայրապետարանում եւ կամ նաեւ թեմական կենդրոններից մի քանիսում իրար են կցւել ձեռքի տակ եղած կանոնախմբեր, ու այսպէս յաջորդաբար։ Այս ձեւի կազմելու ապացոյցներէն մէկն էլ այն է, որ ժամանակագրական կարգը շատ էլ խիստ չէ. այսինքն, երբեմն աւելի հին ժամանակում կազմւած կանոնախմբից յետոյ, 2-րդ նամ ասելու, որ կանոնագրքի մէջ կանոնները դասաւորւած չեն ըստ բովանդակութեան, այլ ըստ հեղինակի։ Յետագայ ժամանակներում անյայտ հեղինակներ աշխատանք թափած են որոշ դասաւորում մտցնել կանոնագրքի մէջ, սակայն այդ աշխատանքը համատարած բնոյթ չի ստացել։ Հայոց կանոնագրքի գրչագրերը թէ՛ ըստ դասաւորման եւ թէ՛ նամանաւանդ ըստ ընթերցւածների, բաժանուած են 3—4 խմբերի, որն եւ ենթադրել է տալիս, թէ նրանք հարող են կազմւած լինել, կամ աւելի ճիշդն ասած սկզբնական օրինակները կազմւել են զանազան կենդրոններում։ Այս խնդիրների մասին այստեղ աւելի հանգամանօրէն կանգ առնել չենք կարող, ուստի եւ քաւականանք մի քանի խօսք ասել նրանց կարեւորութեան մասին։—

Հայոց կանոնագրքը պարունակում է իր մէջ ոչ միայն Հայոց եկեղեցու իրաւունքի, դաւանութեան եւ պատմութեան մասին, այլ նաեւ Հայոց իրաւունքի համար մեծաբժէք վաւերագրեր, ինչպէս են Շահապիվանի (1447 թ.), Դուինի (554 թ.), Ներսէսի եւ Ներշապուհի (Բ. Դուինի, 648 թ.), Մանագլեւորտի (727 թ.) Պարտաւի (768 թ.) ժողովների կանոնները։

Հայոց կանոնագրքն եղել է Հայ Եկեղեցու համար իր սեփական Corpus Iuris Canonici-ն։

Հայոց կանոնագրքից քաղւածօրէն հրատարակութիւնն եղաւ 1915 թ. Թիֆլիս, Ղուկասեան Մատենադարանի շարքում։ Նրա մէջ ամփոփւած են հայկական ազգային-եկեղեցական կանոնների բոլոր ժողովածուները. հետն ունենալով Սիսի, Զաքի եւ Երուսաղէմի Հայոց ժողովների կանոնները։ Այդ հրատարակութեան համար կանոնագրքի բնագիրը՝ եղած գրչագրերի համեմատութեամբ՝ կազմել է տողերիս զրոյր։ Արժէր, որ կանոնագրքն հրատարակէր իր ամբողջական բնագրով։

2. Դատաստանագիրք Սլաւկալ որդի Դաւթի.— Այս դատաստանագիրքը գործն է Գանձակեցի Դաւիթ վարդապետի, որ կը կոչւի Սլաւկալ որդի։ Հակառակ կիրակոս Գանձակեցի պատմագրի ասածների, Դաւթի կանոններն ամենեւին «գեղեցկայարմար» չեն, այլ նախապաշարեալ մէկի կիսակիրթ գործ, որ մեծ տեղ է տւել իր գրւածքի մէջ նախապաշարմունքների եւ զանազան, երբեմն անարժէք, սովորութիւնների եւ իր կողմից արւած խորհուրդների եւ հրահանգների՝ առ քահանայս։ Անշուշտ մէջը պիտանի բաներ շատ կան՝ նամանաւանդ հայ հին իրաւունքի համար նիւթեր։ Այս գործն ամբողջութեամբ հրատարակւած չէ. հանգուցեալ ուսուցչապետ կարապետ Կոստանեանը հրատարակեց Ազգագրական հանդէսի մէջ իբր նմուշ՝ միայն երկու յօդւած նրանից, մի քանի ուշիմ խորհրդածութիւններով հանդերձ։ Ամբողջական հրատարակութիւնն անհրաժեշտ է։

Սլաւկալ որդւոյ այս դատաստանագիրքը գրւած է Մխիթար Գօշի դատաստանագրքէն մօտաւորապէս քառասուն տարի յառաջ, ասել է 12րդ դարի առաջին կիսին։

3. — Դատաստանագիրք Մխիթար Գօշի.— Այս դատաստանագիրքը գրւած է 1184 թին,

Բագրատունեաց պետութեան անկումէն շուրջ 140 տարի յետոյ, եւ որ եւ է անկախ, հայրենի իշխանութեան կողմից ո'չ ընդունւած եւ ո'չ էլ զործադրւած է:

Մխիթար Գօշի գլխաւոր աղբիւրն եղել է Հայոց կանոնադրքը, որի մասին վերը խօսեցինք արդէն: Գօշի դատաստանագրքի շուրջ կէսը քաղւած է Կանոնգրքի բովանդակութիւնից, որ նրա ժամանակ արդէն լրիւ կազմւած՝ գոյութիւն ունէր եւ կը կիրարկէր եկեղեցու կողմից:

Գօշի բոլոր ուսումնասիրողներս էլ համաձայն ենք մի կէտում, թէ նրա աղբիւրներն ըստ մեծի մասին օտար են, այնչափ օտար, որ ազդել են դատաստանագրքի ընդհանուր բնոյթի վրայ, տալով նրան օտար իրաւունքի գունաւորում ու կնիք: Ասացինք արդէն, որ Գօշը՝ կէսի չափ՝ կազմւած է Հայոց Կանոնգրքի յօդաւանդներից. բայց այդ Կանոնգրքն ինքնին Հայու օտար կանոնախմբերից կազմւած մի դատաստանագիրք է: Եթէ աղբիւրն ինքն օտար մեծ նիւթ է պարունակում, բնական է որ նրա նիւթով կազմւած նոր դատաստանագիրքը պիտի կրէր իր աղբիւրի կնիքը, ինչ որ եւ իրօք տեղի է ունեցել:

Եթէ մէկը Մխիթարի դատաստանագիրքը լաւ է ուսումնասիրել, հապա նա լուծել է նաեւ նրա աղբիւրների խնդիրը: Եթէ իրօք ուսումնասիրողն սպառել է այդ նիւթը, հապա նա չի կարող չտեսնել այն տարբերութիւնը, որ կայ հարցասիրած նիւթի տարբեր մասերի մէջ: Եթէ ուսումնասիրողն իրաւաբան է, բնականօրէն նա պէտք է բնոյթագծէ Մխիթար Գօշն, եւ պատկերացնէ իրաւունքի այն սիւտեմը, որին նա հետեւել է: Կարողացա՞ւ ուսումնասիրողն այդ բանն անել, այսինքն վերլուծել առաջադրեալ նիւթը, թէ իրար հետ անյարիր նիւթերի հետ է իր զործը: Նա պէտք է տեսնի, թէ սեմիտական իրաւունքի առատ նիւթի կողքին կարկատանի պէս կպած են՝ առանց մերւելու, արիական իրաւունքի նիւթեր: Այս դեռ քիչ է. — Արիական իրաւունքի նիւթերի մէջ էլ իրարից աղբնախ գծերով տարբերութիւններ կան: Արդ, ուսումնասիրողն այդ բոլորի տեղն ու ծագումը պէտք է ճշդէ: Այդ բանը ցարդ տեղի ունեցած չէ հիմնապէս:

Ընթերցողին պէտք է նախազգուշացնեմ, որ ներկայիս ես ամենեւին միտք չունիմ

Մխիթար Գօշի մասին ըստ էութեան խորը գնալու ու նրա թէ՛ աղբիւրների եւ թէ՛ բովանդակութեան ամբողջական ուսումնասիրութիւնը տալու:

Մխիթար Գօշի վրայ նայիլ իբր ազգային դատաստանագրքի վրայ, սխալ կը լինէր: Սրա հակառակ, նա Հայոց հին իրաւունքի պատմութեան մէջ իր պատուաւոր տեղն ունի, եւ այդ ո'չ թէ այն պատճառով, որ նա — այդ դատաստանագիրքը — մէկ երեւոյթ է հայ իրաւունքի կամ թէ հայ իրաւական մտքի դարգացման եւ բանաձեւման ընթացքի տեսակէտէն, այլ նրա համար, որովհետեւ Գօշի մէջ հայ իրաւունքի ոչ արհամարհելի մնացորդներ կան: Խօսքս չի՝ վերաբերում Գօշի դատաստանագրքի մէջ տեղ բռնած զուտ հայկական կանոններին, որոնք մենք կը զրտենք, Գօշից անկախօրէն, Հայոց Կանոնգրքի մէջ, ասել է, այդ կողմից Գօշը հայ հին իրաւունքին որ եւ է ձառայութիւն արած չէ: Խօսքս կը վերաբերի այլ նիւթերի, որ պէտք է գտնել առաւելապէս Գօշի իրաւականութիւնների մէջ, մեկնութիւններ, որոնք երբեմն կցւած են յառաջ բերւած այս ու այն յօդաւանդի առթիւ, տեւալ յօդաւանդի համար իբր լրացուցիչ մասն:

Մէկ հին ճշմարտութիւն կրկնած կը լինեմ, եթէ ասեմ, որ ազգային է այն իրաւունքը, որ մէկ ազգի կեանքէն կը բղխէ, ու նրա ցեղական կնիքը կը կրէ իր վրայ: Այդ տեսակէտէն՝ Մխիթար Գօշի դատաստանագիրքը ազգային, հայկական չէ իր ընդհանուր բնոյթով եւ իր ներկայացուցած իրաւունքի զրութեամբ:

Մխիթար Գօշի մէջ ցեղային-հայկականը գտնելու համար՝ պէտք է դայն որոնել, ինչպէս վերն ասացինք: Բայց թէ ի՞նչն է ազգային-հայկական՝ Գօշի դատաստանագրքի մէջ, այդ բանը գտնելու համար, ուսումնասիրողը նախապէս ծանօթ պիտի լինի հայ իրաւունքի ընդհանուր բնոյթին, որին նա կարող է հասնիլ Մխիթար Գօշի դատաստանագրքէն անկախ, է՛լ աւելի հին նիւթերի ուսումնասիրութեամբ:

Մխիթար Գօշի դատաստանագիրքն հրատարակւած է Ս. Էջմիածնի վանական տպարանում, վահան Ժ. Վ. Բաստամեանի ձեռքով, 1880 թւին, որին նա կցել է մի ընդարձակ ուսումնասիրութիւն, որ չի վերաբերում նրա

բովանդակութեանն ըստ էութեան. այսինքն դա առաջագրեալ նիւթի ուսումնասիրութիւնն չէ, այլ մէկ թեթեւ բանասիրական-պատմական ակնարկ: Այդ բանը, պէտք է առել, վեր էր Բաստամեանի պատրաստութիւնից, քանի որ նա իրաւարան չէ հղել, ինչպէս սխալմամբ կարծուել է, այլ բնագէտ: Սակայն, այս հանգամանքը չի նսեմացնի նրա կատարած դործը, որով նա զիտական աշխարհի առաջ դրեց Մխիթարի դատաստանագրքի ամբողջական բնագիրը: Ճիշդ է, նա կարող էր ձեռքի տակ ունեցած ըոլոր ձեռագրերի համեմատութեամբ մի նոր բնագիր տալ, հնագոյն տեքստը վերականգնել, սակայն դրա համար նա փորձառութիւնը պիտի ունենար բնագրերի հրատարակութեան, որ դժբախտաբար չունէր:

Այդ է պատճառը, որ նա վերցրել է մէկ ձեռագիր, արտագրել, եւ առանց ի նկատ առնելու միւս զբնագրերի տւած նիւթը՝ հրատարակել: Բայց միայն այն հանգամանքը, որ նա հասկացել է, թէ հայ հին իրաւունքը չի կարելի ուսումնասիրել, առանց որ նախապէս հրատարակէին զոյութիւնն ունեցող դատաստանագրքերն ու այլ նիւթերը, որոնք կան մեր հին մատենագրութեան մէջ ու հրատարակողի կը սպասեն ակնապիշ, արդէն բաւական է, որ նրա — Բաստամեանի — անունը կապել հայ զիտական գրականութեանը հետ, ու նրա կատարած գործի համեմատաբար թեթեւ պակասութիւններն անտեսուին:

Մխիթար Գօշի այդ հրատարակութիւնն սպառած է, եւ իբր բնագիր, ինչպէս ասացինք, պակասաւոր: Անհրաժեշտ է, որ լինի նրա նոր հրատարակութիւնը, ըոլոր ձեռագրերի համեմատութեամբ: Այդպիսի մի գործ անկասկած եմ թէ լաւ ծառայութիւն մատուցանէր հայ իրաւունքի պատմութեանը:

4. Դատաստանագիրք Սմբատ Գունդսդարի.— Կիլիկեան Սմբատ իշխանը, ինչպէս ինքն է ասում, ժամանակի մարդոց հասկանալի անելու համար, դիւրահասկանալի լեզուով ձեռնարկում է տալ մէկ դատաստանագիրք, քանի որ հինը, խրթին լինելու պատճառով, դձուէր ժողովրդին անհասկանալի: Կազմւած լինելով 1265 թիւն. ասել է Գօշից 81 տարի յետոյ, համառոտաբար ունի նոյն բովանդակութիւնն համարեալ, ինչ որ

Գօշի դատաստանագիրքը: Նա կերտել է Ռուբինեանց պետութեան ժամանակ: Եթէ լեզուի կողմից ուսմիկ է Սմբատի օրէնագիրքը, համեմատելով Գօշի հետ, սակայն, աւելի բուն ազգային հին իրաւունքի փշրանքներ է պարունակում, քան թէ նա, ուստի եւ այդ տեսակէտէն էլ աւելի արժէքաւոր: Լեհահայոց դատաստանագիրքը, որ հրատարակել է Ferdinand Bischoffը հանելով Լվովի դիւանից, իր որոշ մասերով, օրինակի համար ժառանգական խնդիրներում, էլ աւելի է մօտենում Սմբատի քան Գօշի դատաստանագրքին:

Մի բան ընդոր ուսումնասիրողների, եթէ աւելին չասեմ, ուշադրութիւնից վրիպել է: Ուսուցչապետ Karstը որ հրատարակել է Սմբատի դատաստանագիրքը երկու հատորով, առաջնի մէջ հայերէնի հետ տւած է նաեւ նրա գերմաներէն ընտիր թարգմանութիւնը: Հայերէն բնագիրն նա դուրսհանել է Գօշի դատաստանագրքի համապատասխան յօդւածները: Ուսուցչապետ Karst այն կարծիքի է, որ Սմբատի համար Գօշի դատաստանագիրքը բնագիր է ծառայել, ու ինչ նա համառօտել է: Նրա այս կարծիքը իր շատ մասով վերաքննելի է, որովհետեւ Գօշից տարբերող նիւթերի ազդիւրն ստուգապէս չէ մատնանշւած, իսկ այն, ինչ արդէն արւած է, իրականութեան համապատասխանելուց շատ հեռու է, ինչպէս օրինակ աղջիկների ժառանգելու եւ տնօրէնստութեան մասին որ արդէն իր տեղում ցոյց տւինք: Երկրորդ հատորն ինքն անւանել է «Kommentar», ուր բաց ի ընտիր եւ ուշիմ ծանօթութիւններէ, տեղաւորած է նաեւ Կիլիկեան այդ օրէնագրքի ուսումնասիրութիւնը: Գրչագրերի համեմատութեամբ 1918 թ. «Էջմիածնում եւ հրատարակեցի Սմբատի դատաստանագիրքը, տալով լաւագոյն բնագիրը որ հնարաւոր էր:

5. Մատենագրական նիւթեր.— Հին Հայոց Մատենագրութեան մէջ պահւած են հատ ու կտոր տեղեկութիւններ հայ իրաւունքի դանազան խնդիրների մասին: Նոքա առանձնապէս շահեկան են ընտանեկան կազմակերպութեան, ժառանգութեան, պետական գրութեան, դատական, վարչական, պատժական ու այլեւայլ հայացի ըմբռնողութիւնների էութիւնը ընդորոշելու համար: Հայ իրաւունքի

ուսումնասիրութեան համար մեր հին լեզուն ունի իրաւական մտքի արտայայտութեան շատ բառեր, որոնք այս ու այն իրաւաբանական հարցերու վերաբերեալ կը բանաձեւեն, ուստի եւ խիստ անհրաժեշտ է մեր հին լեզուի, ինչպէս նաեւ մեր բարձրագոյն դաստիարակութեանը:

6. Սովորոյթի իրաւունք. — Կանոնադրեց աւելի հին դատաստանագիրք մեր ձեռքը չի հասել: Արշակունեաց եւ Բագրատունեաց շրջանում, գոնեա՛, անշուշտ մեր երկիրը կառավարւում էր մէկ օրէնքով: Եթէ այդ օրէնքներէն մեզի չի հասել ժողովածուի ձեւով ու եւ ձեռնարկ, ինչ թուում է, թէ թերեւս չի էլ գոյութիւն ունեցել: Այն ժողովուրդները, որոնք կառավարւում են սովորոյթի օրէնքով, նրանց մէջ կենդանի եւ կենսունակ է սովորոյթը, որ լրիւ օրէնքի ոյժ ունի: Հայ ժողովուրդն այդպիսիներից մէկն է եղել իր պատմական կեանքի ընթացքում: Նա մեզի մօտ անցեալում էլ, իր առաջին ու զբաղակալ գիւղական կեանքում դեկավարւում էր պապեանական սովորութիւններով, որոնք օրէնքի պարտադիր ոյժ ունէին, ու որոնց առաջ խոնարհւում էին այդ սովորութեանց վճռահատութեանը դիմող կողմերը: Դեռ այսօր էլ ժողովրդական ընթացիկ կեանքի մէջ մենք կը գտնենք օրէնքի ոյժ ունեցող ու կենսունակ սովորութիւններ, որոնք դարերի հնութիւնից են խօսում մեզի: Հայ հին իրաւունքի ուսումնասիրութեան ժամանակ, այդ իրաւունքի շէնքը կառուցանելիս, սովորոյթը իրաւունքի սքանչելի նիւթեր կարող է մատակարարել, եթէ խելահաս կերպով նրանից օգտուել կարողանանք: Անհրաժեշտ է, որ պապեանական սովորոյթին արժանի հաւկը տանք, այդ սովորութիւններից շատերը հայ հին քաղաքակրթութեան բեկորներից են:

7. Հնագիտութիւն. — Հայ հնագիտութիւնն եւս կարող էր ազգային իրաւունքի ուսումնասիրութեան համար նիւթեր մատակարարել, սակայն այդ ընագաւառում հետախուզումներն այնքան մանուկ են, որ դեռ նոր ուղի են բռնում իրենց համար: Կատարւած պեղումների արդիւնքն այնքան մեծ չէ, որ հնարաւոր լինէր հին պատմութեան էջեր կարգաւ այնտեղ:

8. Ստար դատաստանագրեր. — Մեր ձեռագրերի մէջ կան մի շարք օտար օրէնագրերի ժողովածուներ: Յիշենք մի քանի, ա. թէոդոսի Կողեքսը, բ. Ասորական դատաստանագրքը, գ. Անտիոքի ասսիզները, եւն. Նամանականդ երկու նախընթացները եթէ լաւ ուսումնասիրեն, թերեւս նրանց մէջ զբաղակալ արտագրողների ձեռքով ազգային սովորոյթի իրաւունքի փշրանքներ ներս սպրդած լինին՝ իրրեւ բացատրութիւն: Յամենայն դէպս հայ հին իրաւունքի եւ ասորական դատաստանագրքի աղբրան, ըստ իս, ակներեւ է, որ արդէն նրա հայ բնագրի իմ արած հրատարակութեան յառաջաբանի մէջ ակնարկած եմ 1917 թին:

•••

Ուսումնասիրենք հայրենի մնացորդները, որոնք լա՛ւ բաներ են, անցեալի յիշատակներ: Մեզի լա՛ւ ճանաչելու եւ ճանաչել տալու համար անհրաժեշտ է ուսումնասիրութիւնն այն բոլորի, ինչ մեր ցեղի անցեալ կեանքին կը վերաբերի, այսինքն հայ քաղաքակրթութեան պատմութեանը:

ԴՕԿՏՕՐ ԱՐՍԷՆ Ծ. Վ. ՂԱԸՃԵԱՆ